

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

mirumyan1951@mail.ru

ՄԻՐԱՐՓԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

sirarpi81@mail.ru

**ԳԻՇԵՐ ԵՎ ՅԵՐԵԿ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԴԱՐՁՎԱԾԱԿԱԶՄԻՉ
ԱՐԺԵՔՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Ժամանականիշ բառեր, գիշեր, ցերեկ, դարձվածային միավոր, դարձվածակազմիչ դեր, անվանական կառուցատիպ, անվանաբայական կապակցություն, միազազաթ կառույց:

Ключевые слова и выражения: ночь, день, фразеологические единицы, метафорическое значение, номинальный структурный тип, номинально-вербальное сочетание, одновершинная структура.

Key words and expressions: temporary words, night, day, phraseological units, metaphorical meaning, nominal structural type, nominal-verbal combination, single-vertex structure.

Նախաբան

Լեզվի բառային կազմի միավորները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս ինչպես իրենց բուն՝ ուղղակի իմաստով, այնպես էլ փոխաբերական նշանակություններով: Փոխաբերական նշանակությունը բառայինից մակաբերված իմաստավորում է, որ պայմանավորված է որոշակի գործոններով, ինչպես՝ առարկայանիշ բառերի գործածությունը հատկանիշների փոխաբեր, հատկանշային իմաստով բառերի գործածությունը առարկայական նշանակությամբ, իմաստային զուգորդելիությունը, բառակապակցության կրճատումը և այլն: Այլ կերպ ասած, որոշակի բառեր, գործածվելով փոխաբերական իմաստով, նշում են այլ առարկա կամ այլ հատկանիշ. ըստ այդմ՝ այդ իմաստները ոչ միայն ածանցյալ, այլև պատճառաբանված իմաստներ են համարվում:

Փոխաբերական իմաստներով հանդես են գալիս նաև օրվա հատույթների անվանումները՝ *գիշեր* և *ցերեկ* ժամանականիշ բառերը, որոնք որոշակի կապակցություններում դրսևորում են ժամանակային

կտրվածքների վերաիմաստավորված նշանակություններ: *Գիշեր* և *ցերեկ* ժամանականիշ բառերն այդ իմաստով հանդես են գալիս նաև կայուն կապակցություններում և բնութագրվում են դարձվածակազմիչ դերով:

Սույն հոդվածում կփորձենք մեկնաբանել *գիշեր* և *ցերեկ* ժամանականիշ բառերի դարձվածակազմիչ արժեքն արդի հայերենում:

Բովանդակություն

Դարձվածային միավորները (ԴՄ) ծագումնաբանորեն սերում են ազատ կապակցություններից, միայն թե ԴՄ-ները (մեծ մասամբ) վերաիմաստավորված կառույցներ են, որտեղ կարևոր դեր ունեն բաղադրիչների շարահյուսական կապի մթագնումը, բաղադրիչ բառերի փոխաբերական-իմաստային առումները, բաղադրիչ բառերի միասնականությունը, սրանց հիման վրա առաջացած բառակապակցական կայունությունը¹:

Երբ խոսվում է ԴՄ-ների բաղադրիչների փոխաբերական իմաստների մասին, նկատի է առնվում կապակցության իմաստային կառուցվածքի նկարագիրը՝ փոխաբերական իմաստի պատճառաբանվածությունը:

Երբ խոսում ենք միևնույն բաղադրիչի՝ լեզվական տարբեր կառույցներում հանդես գալու հատկության մասին, անհրաժեշտություն է զգացվում բացահայտելու քերականական տվյալ իրողության իրական ծավալը, թե ե՞րբ է այն բառայինից տեղափոխվում բառադարձվածային ոլորտ:

Փաստորեն այդ կարգի բառերի իմաստագործառական քննության հիմքում պետք է դրվի այն հարցը, թե բազմիմաստ միավորները խոսքում ինչպե՞ս են ձևաբանաշարահյուսական առումով հարաբերակցվում իրենց բառադարձվածային իմաստների հետ:

Դարձվածքների իմաստային կառուցվածքում բաղադրիչների փոխաբերական նշանակությունները պայմանավորված են որոշակի գործոններով, որոնց մեջ կարևորվում են՝ բաղադրիչների նախնական փոխաբերականությունը և բաղադրիչների դարձվածայնացումը:

Հայտնի է, որ ԴՄ-ների շրջանակներում բառերը ձեռք են բերում փոխաբերական-դարձվածային նշանակություններ. դարձվածային կառույցի ներսում նրա բաղադրիչների նոր իմաստներն ու քերականական նշանակությունները բխում են ինչպես իրենց՝ բաղադրիչների, այնպես էլ

¹ Տես Պ.Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 5: Ս.Գալստյան, Հ.Պետրոսյան, Թ.Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Ե., 1975, էջ 81: Հ.Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 259: B.B.

Стариченок, Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008, էջ 684.

ամբողջ կապակցության վերախմաստավորման հանգամանքից²։ Կապակցությունների բովանդակային պլանում բաղադրիչների բառային նշանակությունների վերախմաստավորումն ընդունված է անվանել դարձվածայնացում։

Դարձվածայնացման ընթացքում բառակապակցությունը ենթարկվում է մասնակի կամ լիակատար իմաստափոխության, որի էությունն այն է, որ կառույցի բաղադրիչները ձեռք են բերում նոր նշանակություններ, որոնք հատուկ են միայն տվյալ կառույցին և իրացվում են միայն դրա շրջանակներում։ Այդ նոր նշանակություններն էլ նրա դարձվածայնացման ցուցիչներն են դառնում։

Բառույթը, դարձվածայնացման ընթացքում ձեռք բերելով նոր նշանակություն, կարող է փոխել նաև քերականական արժեքը՝ արտադարձվածային իմաստից ու արժեք(ներ)ից տարբերվելով ձևաբանական իմաստի կառուցվածքի առումով։

Նման բաղադրիչները լեզվական անհամասեռ հարթություններում կարող են հանդես գալ ոչ միայն իմաստային, այլև ձևաբանաշարահյուսական կարգերի տարաստիճան իրացումներով։ Նման դեպքերում բաղադրիչի դարձվածային նոր նշանակությունը, նրան տեղափոխելով բառադարձվածային ոլորտ, կարող է փոխել նաև նրա իմաստային կառուցվածքը։

Լեզվում այդ դերով կարող են հանդես գալ տարբեր իմաստային-թեմատիկ խմբերի բառեր, դրանց մեջ, սակայն, որոշակի յուրահատկություն են դրսևորում ժամանականիշ բառերը։

Օրվա շրջափուլի հիշյալ երկու հատվածներին բնորոշ են վառ արտահայտված որակական բնութագրերը, որոնցով էլ պայմանավորվում են դրանց տարբեր ընկալումները։ Վերջիններս կարելի է ներկայացնել հետևյալ կերպ։

Գիշերվա խորհրդանշային ընկալումներ՝

- ♣.լուսային՝ մթություն, խավար,
- ♣.գունային՝ սև,
- ♣.ձայնային՝ լռություն,
- ♣.հատկանշային՝ մոռալություն, խորհրդավորություն, անիմանալիություն, չարագուշակություն,
- ♣.զգացական՝ վախ, սարսափ, անհանգստություն,
- ♣.խորհրդանշային արժեք՝ զառամություն, մահ)։

² Լ.Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 76։

Յերեկվա խորհրդանշային ընկալումներ՝

- ♣.լուսային՝ լույս,
- ♣.գունային՝ սպիտակ, ոսկեգույն,
- ♣.ձայնային՝ աղմուկ, թնդյուն,
- ♣.հատկանշային՝ պարզություն, պայծառություն,
- ♣.զգացական՝ ուրախություն, հույս, լավատեսություն,
- ♣.խորհրդանշային արժեք՝ երիտասարդություն, կյանք³:

Գիշեր և *ցերեկ* բառերի զգացական և խորհրդանշային արժեքներն են ընկած դրանց փոխաբերական գործածության հիմքում:

Ժամանակային իմաստով *գիշեր* և *ցերեկ* բառերը հին հայերենում հանդիպում են կայուն կապակցություններում, ինչպես՝ *գտիւ և զգիշեր*, *գիշեր* և *ցերեկ*՝ «ամբողջ օրն ու գիշերը՝ որպես ժամանակային ամբողջություն» իմաստով, ինչպես՝

Երիցս ձաղկեցայ, երիցս նաւակոծ եղէ, գտիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ (Բ Կորն., ԺԱ, 25): Անարժանքս *գիշեր* և *ցերեկ* յամենայն աղօթսն և այլ ի տանէն՝ ուր կատարի *գիշեր* և *ցերեկ* (ՆՀԲ, 2, 913):

Գիշեր և *ցերեկ* բառերը, բացի իրենց ուղղակի իմաստներից՝ ժամանակի որոշակի հատվածներ նշանակելուց, կարող են հանդես գալ նաև փոխաբերական նշանակություններով՝ հիմքում ունենալով ժամանակային հատույթների վերաիմաստավորված առումներ:

Անշուշտ, ԴԲ-ների կազմում դժվար է առանձնացնել բաղադրիչներից մեկի փոխաբերական դարձվածային արժեքը, քանի որ կառույցի արտահայտության պլանում բոլոր բաղադրիչները միասին են ձևավորում ԴԲ-ների բովանդակային պլանը: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում հնարավոր է առանձնացնել որոշ բաղադրիչների փոխաբերական նշանակություններ՝ պայմանավորված դրանց թեմատիկ-իմաստային խմբին բնորոշ իմաստներով, ինչպիսին է, օրինակ, ժամանակի իմաստային-թեմատիկ խումբը:

Այսպես, *գիշեր* բառը բուն բառական իմաստով նշանակում է «օրվա մի մասը՝ մայրամուտից մինչև լուսաբաց» և ազատ կապակցություններում հանդես է գալիս ուղղակի իմաստով, ինչպես՝

Գիշերի դեմ *գիշեր* է մութ, նրանց հոգին խավարամած՝ Եվ լույս տալով կովում էին ամբոխները խելագարված (Ե. Չարենց): Եվ մի *գիշեր*, երբ

³ Ն.Հենքեքյան, *Գիշեր* և *ցերեկ* բառերի իմաստային վերլուծություն (լեզվամշակութաբանական հայացք), Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ, Ե., «Աստղիկ», 2 017, էջ 2 2 9-2 46:

Բաղդատը քուն էր մտել Տիգրիսի նոճիածակ ափերին, Աբու Մահարին գաղտնի հեռացավ քաղաքից (Ավ. Բսահակյան):

Ցերեկ ժամանականիշ բառն ազատ կապակցություններում հանդես է գալիս ուղղակի իմաստով՝ «օրվա մի մասը՝ արևածագից մինչև մայրամուտ, առավոտից մինչև երեկո»: Հմմտ.՝ Նա *ցերեկը* դուրսն էր անցկացնում, իսկ գիշերը ժամապահի պաշտոն էր կատարում (Վ. Տերյան): Մենք *ցերեկով* մտանք անտառն ու սկսեցինք մոռ ուտել (Վ. Անանյան): *Ցերեկը* լավ է այնքան, *ցերեկը* խինդ է բերում (Ե. Չարենց):

Գիշեր և *ցերեկ* բառերի փոխաբերական իմաստները պայմանավորված են նրանց նկատմամբ մարդու ունեցած հոգեկան-զգացական պատկերացումներից, մարդու վրա նրանց թողած տպավորությունից. *գիշերն* ունի «խավար, մռայլ, տխրություն. սարսափ, երկյուղ, վախ»⁴, *ցերեկը*՝ «լույս, լուսավոր. պարզ, ակնհայտ. հույս» փոխաբերական նշանակություններ, որոնք դարձվածակազմիչ արժեքով հանդիպում է մի շարք կայուն կապակցություններում:

Ընդ որում, *գիշեր* և *ցերեկ* ժամանականիշ բառերով ԴՄ-ները կարելի է ներկայացնել երկու՝ անվանական և անվանաբայական տեսակներով:

Ա. Անվանական ԴՄ-ներ - Անվանական կառուցատիպի ԴՄ-ների բաղադրիչներն անուն խոսքի մասեր են. դրանք կազմված են *գոյական+գոյական* կամ *ածական+գոյական կադասյարներով*: Դիտարկենք այդ կառույցների իմաստները՝ ուշադրություն դարձնելով ժամանականիշ բառերի փոխաբերական իմաստներին:

Գիշեր բառը փոխաբերական իմաստով հանդես է գալիս *Բարդուղիմեոսյան գիշեր* կայուն կապակցության մեջ, որ նշանակում է «անպաշտպան մարդկանց համընդհանուր կոտորած», ինչպես՝ Քաղաքակիրթ մարդկությունը պետք է պայքարի, որ այլևս չկրկնվեն *բարդուղիմեոսյան գիշերները* (Մամուլ):

Գիշերը զուգորդություն է կազմում *Աստված* բառի հետ՝ *Աստծո գիշերը*, պահպանելով ժամանակային իմաստը. կապակցությանը դարձվածային արժեք է հաղորդում *Աստված* բաղադրիչը. այն նշանակում է «ամեն գիշեր, հմմտ. *Աստծո գիշերը* գալիս են հանդեն, Փետ են հավաքում, Վառում են օդեն (Հ. Թումանյան):

⁴ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է *գիշեր* բառի փոխաբերական մեկ այլ իմաստ ևս՝ «կյանքի մայրամուտ, զառամյալ հասակ», որ, կարծում ենք, բնորոշ է *մայրամուտ* կամ *իրիկուն* բառերին: (Տես «Արդի հայերենի բացատրական բառարանի» համապատասխան բառահոդվածը):

Սպիտակ գիշերներ – բաղադրիչներն արտահայտում են հականշային հարաբերություն. եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ *գիշերը* գունային երանգով *սև* միջուկային գունանվան եզրային անդամ է՝ «մութ, գորշ» իմաստով, իսկ *սպիտակը* համանուն գունանվան միջուկային անդամ է, ապա նրանց հականշային հարաբերությունն ակնհայտ է: *Սպիտակ գիշերներ* կայուն կապակցության փոխաբերական նշանակությունը պայմանավորված է *սպիտակ* բաղադրիչի դարձվածային իմաստով: Կապակցությունը նշանակում է «լուսավոր՝ կարճատև գիշերներ, որ լինում են հյուսիսում զարնանը և ամռանը»: Օրինակ՝ Մանկտ – Պետերբուրգի վրա թևածող *սպիտակ գիշերները* օդերևութաբանական գործընթացի հետևանք են, որոնք օտարի վրա թողնում են անսովոր տպավորություն (Մամուլ)⁵:

Գիշերվա սատանա – 1. «շատ տգեղ՝ սատանայի նման մարդ», օրինակ՝ Երբ ճահճի միջից խեղդվողին դուրս հանեցին, վերջինս կարծես մարդկային կերպարանք չուներ. իսկը *գիշերվա սատանա* (Մամուլ): 2. «Անակնկալ՝ անախորժ դեպք հաղորդող տհաճ անձնավորություն». օրինակ՝ Ո՞վ հաղորդեց քեզ այդ չարագույժ լուրը, *գիշերվա սատանա* (Մամուլ):

Երկար դաշույնների գիշեր – «հակառակորդների՝ անցանկալի անձանց անողոք ջարդ». օրինակ՝ Ոմանք ասում էին, թե պատրաստվում է նոր «*երկար դաշույնների գիշեր*», հաշվեհարդար տեսնելու «ռայխի ինչ-որ թշնամիների» նկատմամբ («ԳԹ»):

Անդուռ գիշեր – «խավար, ծանր պայմաններ». օրինակ՝ Դեռ ի՞նչ գանձեր անհուն, անծիր պիտի հանես դու աշխարհիդ, Եթե անդուլ կյանքիդ վրա *անդուռ գիշեր* չչորի (Ե. Չարենց):

Ցերեկ աչքով – «լույսով, ցերեկով». օրինակ՝ Քայլերն արագացրին, որ *ցերեկ աչքով* տեղ հասնեն (ՀԴԸԲԲ):

Օրը՝ օր ցերեկով – լույս ցերեկով. օրինակ՝

1. «Բացահայտ, բացեիքաց, բոլորի աչքի առջև». Սոքա առակ չեն, այլ *լույս ցերեկով* գործված իրողություն (Մ. Նալբանդյան): Միշտ գալիս էին անթիվ նավերով, այն էլ աշկարա *օրը ցերեկով* (Ղ. Աղայան):

2. «Բացահայտ ու հանդգնորեն». Էդ միևնույն թերթը հանդգնեց *օրը ցերեկով* դուրս գալ հայոց գրողների ապահովության խնդրի ու գրական ֆոնդի դեմ (Հ. Թումանյան):

⁵ Կապակցության դարձվածային արժեքն ընդգծվում է *սպիտակ գիշերներ անցկացնել* կառույցի շրջանակներում՝ «անքուն գիշերներ անցկացնել» իմաստով:

3. «Բոլորի աչքի առաջ, ի տես ամենքի»։ Ապրելու ապրիլ, ինչո՞ւ է մեռնում Գարնան սպասող մի ողջ ժողովուրդ, Գարնան օրերին, *օրը ցերեկով*, Աշխարհին ի տես, աչքի տա կ'աստծու (Ս. Կապուտիկյան)։

Գիշեր բառը զուգորդություն է կազմում ժամանականիշ *օր* բառի հետ՝ ձևավորելով անվանական կապակցություններ, ինչպես՝ *գիշեր ու գօր, գօր ու գիշեր, օր ու գիշեր* և այլն, որոնք արտահայտում են ժամանակային ծավալի ամբողջականություն՝ «ամբողջ օրը, օրն ի բուն» և ժամանակի տևականության գաղափար՝ «անընդհատ, միշտ» Հմմտ.

Ինքը ջահել-երիտասարդ, Տունը պառավ հեր ու նանի, Քրտինք թափում *գիշեր ու գօր* – Պահում էր տուն ու ընտանիք (Ե. Զարենց)։

-Հա՛յր, դրանցից և ոչ մեկը չի կարող վանել այն վշտերը, որ *օր ու գիշեր* տանջում են ինձ (Բաֆֆի)։

Կայուն կապակցությունների կազմում *գիշեր* հենակետային բաղադրիչն ստանում է նաև այլ կարգի սաստկական լրացումներ, որոնք ընդլայնում և ամբողջացնում են նրա ժամանակային իմաստի շրջանակները, ինչպես՝ *գիշեր ի բուն, գիշեր ի լույս, ողջ գիշերն ի լույս* և այլն՝ «ողջ գիշեր, ամբողջ գիշեր, ողջ գիշերը՝ մինչև լուսաբաց» իմաստներով, ինչպես՝

- Դու չե՛ս կամենում, որ իմ մատները *ողջ գիշերն ի լույս* սաղմոսներ երգեն, Օ՛, Սուլ-Սուլամի, Օ՛, Սուլամիթա (Պ.Սևակ)։

Բ. Անվանաբայական ԴՄ-ներ. Այս կառուցատիպի ԴՄ-ները կազմված են անուն խոսքի մասերից և բայական բաղադրիչից և ներկայացնում են *գոյական+բայ* ձևակազմական կաղապարը։ Դիտարկենք այդ կարգի ԴՄ-ների իմաստային կառուցվածքները։

ա) Որոշ դեպքերում *գիշեր* բաղադրիչը պահպանում է իր ուղղակի իմաստը. կապակցությունը փոխաբերական իմաստ է ստանում հարակից բաղադրիչի (բաղադրիչների) միջոցով։ Հմմտ. *սպիտակ գիշեր (գիշերներ) անկացնել* կապակցությունը՝ «անքուն գիշեր անցկացնել. ամբողջ գիշերը չարչարվել» իմաստներով, ինչպես՝ Երկիր մը պատերազմական վիճակի մեջ ըլլալով՝ տարեց զինվորները հարկադրվին *սպիտակ գիշերներ անցընել* ծանր գնդացիները շալակած («Զարթոնք»)։

բ) Այլ կարգի կապակցություններում *գիշեր* բաղադրիչը նշանակում է «վերահաս վտանգ, չարիք. անհաջողություն», ինչպես՝ *գիշերը պատել* (անհաջողություն՝ դժբախտություն լինել, անհաջողության հանդիպել), հմմտ.

Առ քնարս... Աստղի փայլով շողա թող նա, Եվ երբ կյանքում *պատի գիշեր*, Ճամփա ցույց տա միշտ դեպի վեր (Հ. Թումանյան)։

գ) Որոշ դեպքերում այն նշանակում է «լավատեսություն», ինչպես՝ *գիշերը լույս ունի*, որ նշանակում է «հուսահատության մեջ լուսավոր բան կա. անհաջողությանը կարող է հաջորդել հուսադրող որևէ բան», հմմտ.

Սպասի՛ր, ասում են, *գիշերը լույս ունի* (Հ. Թումանյան):

դ) Այն նշանակում է նաև «թանձրություն, մոայլություն. վիշտ», ինչպես *գիշերը ծանրանալ*, հմմտ. Խավար *գիշերը ծանրացավ* ահա Դաշտերի վրա (Հ. Թումանյան):

ե) Նշանակում է նաև «խավար, մթություն», ինչպես՝

Գիշերը գալ՝ հասնել իջնել - «խավարը՝ մթությունը պատել ամեն ինչ», հմմտ.

Լիլի՛թ, նագելի՛, *գիշեր է գալու* հիմա, գնանք իմ տաղավարը (Ավ. Բասիկյան):

Գիշերն ընկնել «դժբախտանալ, հույսն ու ապավենը կորցնել». հմմտ.

Գիշերս ընկավ, Սարո՛ ջան (Հ. Թումանյան):

Կայուն կապակցություններում *ցերեկը* հանդես է գալիս փոխաբերական իմաստներով՝ կազմելով *անվանաբայական հարադրություններ*, որտեղ բայական բաղադրիչն ամբողջացնում է անվանական բաղադրիչի փոխաբերական նշանակությունը, ինչպես՝

ա) *ցերեկն անցնել*. «երիտասարդություն, լավ կյանք», օրինակ՝

Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել՝ Ուզում է քնել, հավիտյան քնել... *Ցերեկս անցել է*, գիշեր է, գիշեր (Հ. Թումանյան):

բ) *գիշերը ցերեկ անել*. «լուսավոր, պայծառ», օրինակ՝ Խնջույք է սարքել Թըմկա տիրուհին, *Ցերեկ է արել խավար գիշերը* (Հ. Թումանյան):

գ) *ցերեկն իր աչքը բաց արավ*. «օր, լուսաբաց», օրինակ՝

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ Աշխարհքի վրա, Ջավախքի վրա (Հ. Թումանյան):

դ) *ամեն գիշեր ունի առավոտ*. «խավար, անախորժ վիճակ», օրինակ՝

-Մի՛ տխրիր շատ, սիրելի՛ քենակալ, *ամեն գիշեր ունի իր առավոտը* (Դ.Դեմիրճյան):

Գ. Միագագաթ ԴՄ-ներ. Միագագաթ համեմատություն-դարձվածային միավորները ձևավորվում են ժամանակակից *գիշեր* կամ *ցերեկ* բառերով և *պես*, *նման* կամ *ինչպես* կապերով⁶, հմմտ. *գիշերվա պես*, *գիշերվա նման*, *ինչպես գիշերը*, *ցերեկվա պես* և այլն: Օրինակ՝

Եկավ Թըմկա բերդը պատեց, *Ինչպես գիշերն* էն խավար (Հ. Թումանյան):

⁶ Միագագաթ ԴՄ-ների մասին տես Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ...: Լ. Խաչատրյան, Լ. Ավետիսյան, Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (V-XII դդ.), Ե., 2015, էջ 29-35:

Որպես *մթության՝ խավարի՝ գորշության* խորհրդանիշ՝ *գիշերը* առնչվում է *սև* միջուկային գունանվան իմաստային դաշտին և նրա հետ կազմում է համեմատություն-դարձվածային միավոր՝ *սև ինչպես գիշերը*⁷, հմմտ.

Խոովամազ Պյոտոս, նա, որի զենքերն այնպես *սև էին, ինչպես գիշերը*, որ կուչ էր եկել չարաղետ ձիու որովայնի մեջ... (Շեքսպիր)⁸:

Այսպիսի կիրառություններում *ինչպես գիշերը* կապակցությունն ունի ավելադրության արժեք, որ ուժեղացնում, սաստկացնում է *սև* գունանվան իմաստ, հմմտ. «անասելի՝ սաստիկ սև»:

Դեռևս հին հայերենի համեմատություն-կայուն կապակցությունների կազմում *գիշեր* բառն ստանում է իմաստը սաստկացնող լրացում, որ գունային նույն ենթադաշտի անդամ է, ինչպես՝ *իբրեւ ի գիշերի մութ*, որ ունի մակբայի կիրառական արժեք՝ «մութ գիշերով կամ մութ գիշերվա ընթացքում»⁹: Ինչպես՝

Եւ ի միջօրէի *իբրեւ ի գիշերի մութ* և մեզ և մառախուղ և խաւար պատեալ պաշարէր զԱսքանագեանս ազն (Յհ. Կր., 219):

Ցերեկվա (լույսի) պես (պարզ) - «կատարելապես ակնհայտ ու հստակ», հմմտ.

Անշուշտ դուրին չէ կույր ձևանալ՝ *ցերեկվա լույսի պես պարզ* ճշմարտությունը չտեսնելու աստիճան (ՀԴԸԲԲ):

Այսպիսով, *գիշեր* և *ցերեկ* ժամանականիշ բառերն իրենց բուն իմաստից բացի փոխաբերական նշանակություններ են արտահայտում, որ դրսևորվում է կայուն կապակցություններում: Կայուն կապակցություններում ժամանականիշ բառերի դարձվածակազմիչ արժեքը պայմանավորված է ոչ միայն այդ բառերի, այլև կապակցության մյուս անդամի (անդամների) դարձվածային-փոխաբերական իմաստներով: Երբեմն նման կառույցներում ժամանականիշ բառերը պահպանում են իրենց բուն

⁷ Հմմտ. նաև *սև* միջուկային գունանվան և նրա եզրային անդամների հարաբերակցությունը հետևյալ ՀԴՄ-ների կազմում՝ *սև՝ ինչպես ածուխը, սև՝ ինչպես ագռավը* և այլն:

⁸ Սև գունանվան հարաբերակցությունը գունային ենթադաշտի եզրային անդամի՝ *գիշերվա* հետ, տարածված է նաև այլ լեզուներում, հմմտ. ռուսերեն՝ *чёрный как вечер*, անգլ. *as black as a night* և այլն: Այդ մասին հանգամանորեն տես Լ.Խաչատրյան, Գունանուն Բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, Վանաձոր, 2 003, N 1, էջ 2 2 -2 4:

⁹ Այս կարգի դարձվածային միավորների մասին տես՝ Լ.Խաչատրյան, Լ.Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 61-64):

բառական նշանակությունը, սակայն կապակցության վերախմաստավորման գործոնով պայմանավորված՝ նրանք ևս ձուլվում են կառույցի բովանդակային պլանին՝ ձևավորելով ԴՄ-ների փոխաբերական նշանակությունը:

Եզրակացություն

Գիշեր և *ցերեկ* ժամանականիշ բառերը դարձվածային միավորների (ԴՄ) կազմում հանդես են գալիս դարձվածակազմիչ դերով, որ պայմանավորված է նրանց նկատմամբ մարդու ունեցած հոգեկան-զգացական պատկերացումներից: *Գիշերը* փոխաբերաբար նշանակում է «խավար, մռայլ, տխրություն. սարսափ, վախ», *ցերեկը*՝ «լույս, լուսավոր. պարզ, ակնհայտ. հույս. երիտասարդություն» և այլն:

Գիշեր և *ցերեկ* ժամանականիշ բառերով ԴՄ-ները հոգվածում քննվում են անվանական և անվանաբայական տեսակներով:

Անվանական ԴՄ-ները կազմված են *գոյական+գոյական* կամ *ածական + գոյական* կաղապարներով, ինչպես՝ *Բարդուղիմեոսյան գիշեր*, *Աստծո գիշերը*, *սպիտակ գիշերներ*, *երկար դաշույնների գիշեր*, *ցերեկ աչքով*, *օրը ցերեկով*, *լույս ցերեկով*, *գիշեր ու զօր*, *զօր ու գիշեր*, *օր ու գիշեր* և այլն:

Անվանաբայական կապակցությունները կազմված են *գոյական+բայ* կաղապարով, ինչպես՝ *գիշերը պատել*, *գիշերը լույս ունի*, *գիշերը ծանրանալ*, *գիշերը գալ*, *հասնել*, *իջնել*, *գիշերն ընկնել*, *գիշերը ցերեկ անել*, *ամեն գիշեր ունի առավոտ*, *ցերեկն անցնել* և այլն:

Հոգվածում դիտարկվում են նաև *միազագաթ համեմատություն ԴՄ-ները*՝ *ձևավորված* ժամանականիշ *գիշեր*, *ցերեկ* բառերով և *պես*, *նման*, *ինչպես* կապերով, հմմտ. *գիշերվա պես*, *գիշերվա նման*, *ինչպես գիշերը*, *ցերեկվա պես* և այլն:

Ժամանականիշ բառերի դարձվածակազմիչ արժեքի բացահայտումը դարձվածքների իմաստաբանության կարևոր հարցերից է:

Համառոտագրություններ

Բ Կորն.- Թուրթ Պօղոսի Առաքելոյ առ Կորնթացիս Բ («Աստուածաշունչ» մատեան, Ե., 1997):

«ԳԹ» - «Գրական թերթ»:

ՀԴԸԲԲ - Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Ե., 2011:

Յհ. Կթ.- Յովհաննու Կաթողիկոսի Դրասախանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հհ. Ա-Բ, 1836-1837:

Маргуш Мирумян, Сирарпи Хачатрян

**Фразеологическая значимость временных слов *ночь* и *день*
в современном армянском языке**

Резюме

Временные слова *ночь* и *день* в рамках устойчивых сочетаний выступают метафорическим значением, которое обусловлено психо-чувственным воображением человека по отношению этих слов. *Ночь* метафорически обозначает «темнота, мрачный, тоска, страх, ужас», *день* – «свет, светлый, ясный, очевидный. надежда, молодость» и т.д.

В статье фразеологические единицы (ФЕ) с временными словами *ночь* и *день* рассматриваются в двух срезах: номинальный и номинально-вербальный.

а) Номинальные ФЕ образуются моделью сущ.+сущ. или прил.+сущ., как; Բարդուղիսեան գիշեր (варфоломеевская ночь), Աստծո գիշեր (каждую ночь), սպիտակ գիշերներ (белые ночи), գիշեր ու գոր // գոր ու գիշեր // օր ու գիշեր (день и ночь), օրը ցերեկով // լույս ցերեկով (среди бела дня) и т.д.

б) Номинально-вербальные ФЕ образуются моделью сущ.+глагол, как; գիշերը պատել // գալ // հասնել // իջնել // ընկնել (ночь объела землю), գիշերը ցերեկ անել (работать день и ночь), գիշերը լույս ունի // ամեն գիշեր ունի տոպոս (и на нашей улице будет праздник) и т.д.

В статье также рассматриваются одновершинные ФЕ, которые сформировались временными словами *ночь* и *день* и предлогами *պես*, *նման*, *ինչպես*, ср. գիշերվա պես // գիշերվա նման // ինչպես գիշերը (как ночь; «чёрный, мрачный. ужасный»), ցերեկվա պես (как день; «светлый, ясный, очевидный. надежный») и т.д.

Выявление фразеологической значимости временных слов один из важных вопросов семантики фразеологизмов.

Margush Mirumyan, Sirarpi Khachatryan

**Phraseological significance of temporary words *night*
and *day* in Modern Armenian**

Summary

The temporary words *night* and *day* within the framework of fixed combinations show a metaphorical meaning, which is due to the psycho-sensual imagination of a person in relation to these words. *Night* metaphorically means "darkness, gloomy, melancholy, fear, horror", *day* - "light, bright, clear, obvious. hope, youth" etc.

In the article, phraseological units (PhU) with temporary words *night* and *day* are divided in two groups: nominal and nominal-verbal.

a) Nominal PhU are formed by the models *noun + noun*. or *adj.+noun*, how; *Բարդուղիմեոսյան գիշեր* (Bartholomew's night), *Աստծո գիշեր* (every night), *սպիտակ գիշերներ* (white nights), *գիշեր ու զօր // զօր ու գիշեր // օր ու գիշեր* (day and night), *օրը ցերեկով // լույս ցերեկով* (in broad daylight) etc.

b) Nominal-verbal PhU are formed by the model of *noun+verb*, like; *գիշերը պատել // զալ // հասնել // իջնել // ընկնել* (night embraced the earth), *գիշերը ցերեկ անել* (work day and night), *ամեն գիշերունիառավոտ// գիշերը լույսունի* (and there will be a holiday on our street) etc.,

The article also considers *single -vertex phraseological units*, which were formed by the temporary words *night* and *day* and the prepositions *պես*, *նման*, *ինչպես*, like; *գիշերվա պես // գիշերվա նման* (like night) // *ինչպես գիշերը* (as night; «dark, black, horrible»), *ցերեկվա պես* (like day; «light, bright, clear, reliable») and so on.

Identification of the phraseological value of temporary words is one of the important issues of the semantics of PhU.

Խմբագրություն է ուղարկվել 18. 08. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 01. 09. 2022թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.